

SEIU Տեղական 2015 Միության Որոշումը Արդարություն Բոլորի Համար Որոշման Վերաբերյալ

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը հանդիսանում է Կալիֆորնիայի Երկարատև Խնամքի աշխատավորների կազմակերպություն, որն ի հայտ է բերում երկարատև խնամքի աշխատողների, նրանց ընտանիքների և համայնքների հավաքական ուժը, կիրառում է տեխնոլոգիաների ուժը և իրականացնում է լայնածավալ շարժում, որպեսզի վերացնի անարդար ստատուս քվոն և ապահովի հարատև վերափոխում՝ բոլորիս համար առավել արդար հասարակություն ստեղծելու նպատակով, և

Քանի որ, 2017 թ-ին SEIU Տեղական 2015 Միության անդամները միաձայն քվեարկեցին մեր հիմնադիր Սահմանադրության և Կանոնակարգերի օգտին, որոնք ընդգրկում էին մեր կազմակերպչական առաջնահերթությունների սահմանումը, որն այսօր հայտնի է որպես մեր Արդարադատության Օրակարգ՝ Տնտեսական և Աշխատավորական Արդարադատություն, Բնակարանային Արդարադատություն, Ներգաղթի Արդարադատություն, Վերկանգնողական Արդարադատություն, Շրջակա Միջավայրի Արդարադատություն, որոնց վերջերս նաև ավելացվեց Հաշմանդամության Արդարադատությունը, և

Քանի որ, մեր երկրում տիրող խորը պառակտման ժամանակ SEIU Տեղական 2015 Միության անդամները հանձն են առնում անել ամեն ինչ իրենց ուժերի սահմաններում, որպեսզի միավորեն բոլոր երկարատև խնամքի աշխատողներին, մեր ընտանիքներն ու Կալիֆորնիայի և ամբողջ պետության համայնքները, որպեսզի շարունակենք պայքարել հանուն Արդարադատության Օրակարգի և հանուն **Արդարության Բոլորի Համար,** և

Քանի որ, Արդարության Օրակարգին և Արդարություն Բոլորի Համար իրականացնելու մեր հաջողության գրավականը կայանում է հզոր աշխատավորական շարժում ստեղծելու մեջ, որը կվերացնի աշխատավորների կողմից միությանը անդամագրվելու խոչընդոտները: Դրա շնորհիվ մեր միության գործությունն ուժեղացնելով, բոլորի համար ազատ մասնակցություն ունենալու հնարավորություն և մեր դեմոկրատիային լիովին մասնակցելու հնարավորություն երաշխավորելով, վստահեցնելով, որ բոլորը կարող են օգտվել երկարատև խնամքից, բոլոր երկարատև խնամքի աշխատողները կլինեն գնահատված, հարգված և արդարացիորեն պարգևատրված, և

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՈՐԻ ՀԱՄԱՐ

Քանի որ, մենք հավատացած ենք, որ յուրաքանչյուրը պետք է ունենա միությանն ազատորեն անդամագրվելու իրավունք, և

Քանի որ, ավելի քան 1.5 միլիոն Կալիֆորնիայի երկարատև խնամքի աշխատողներ չեն կազմում որևէ միության մասնիկ, այդ իսկ պատճառով ի վիճակի չեն բանակցելու առավել բարձր աշխատավարձերի և առավել լավ նպաստների համար, և

Հաստատվել է

Քանի որ, Կալիֆորնիայի ընդհանուր աշխատուժի ավելի քան 85%-ը չի ներկայացվում միությանը և չի կարող բանակցել հանուն առավել բարձր աշխատավարձերի, նպաստների և աշխատանքային պայմանների, և

Քանի որ, Կալիֆորնիայի խնամակալների չափանիշները բարձրացնելու մեր հնարավորությունը կախված է նրանից, թե արդյոք մենք ի վիճակի ենք վերացնելու այն խոչընդոտները, որոնք խանգարում են միլիոնավոր երկարատև խնամքի աշխատողներին միությանը միանալու, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միության անդամներն առավել արդյունավետ են միությանը չներկայացվող աշխատավորներին մեր միությանը անդամագրելու գործում, երբ նրանց տրամադրվում են գործիքներ և գիտելիքներ դա անելու համար, և

Քանի որ, միության դեմ աննախադեպ հարձակումների դեմ պայքարելը, որի նպատակն է թուլացնել աշխատավորական շարժումը, պահանջում է ընտրել այնպիսի առաջնորդների, ովքեր հաստատապես համոզված են, որ բոլոր աշխատավորները պետք է իրավունք ունենան միություն կազմակերպելու, և

Քանի որ, մենք հանձն ենք առնում Կալիֆորնիայում և ամբողջ երկրի տարածքում փոփոխել օրենքները, որպեսզի երկարատև խնամքի աշխատողները կարողանան կազմակերպվել, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը եզակի դիրք է գրավում Կալիֆորնիայում միությանը չներկայացվող երկարատև խնամքի աշխատողներին կազմակերպելու նպատակով՝ հաշվի առնելով մեր բազմազանությունն ու աշխարհագրական դիրքը:

ԴԵՄՈՎՐԱՏԻՎ ԲՈՒՈՐԻ ՀԱՄԱՐ

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը, որը ներկայացնում է ավելի քան 400,000 երկարատև խնամքի աշխատողներին Կալիֆորնիայի նահանգում, հանձն է առել մեր ձայնը լսեցնել ընտրական գործընթացում՝ քվեարկելու և մեր դեմոկրատիային լիովին մասնակցելու միջոցով, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միության անդամները հավատացած են, որ անհրաժեշտ է լինել ակտիվ և ընդգրկված մասնակցություն ցուցաբերել մեր դեմոկրատիայում ամբողջ տարին շարունակ և ոչ միայն ընտրությունների ժամանակ, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը կշարունակի քարոզել հանուն համանահանգային և տեղական քաղաքականությունների, որոնք կընդլայնեն մեր դեմոկրատիայի լիակատար մասնակցությունը, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միության անդամները հավատացած են, որ մենք պետք է գործադրենք մեր քվեարկելու և մեր դեմոկրատիային լիակատար մասնակցելու իրավունքը: Մենք նաև պատասխանատվություն ենք կրում ուրիշներին այդ նույն ձևով զորացնելու համար, և

Հաստատվել է

Քանի որ, երկարատև խնամքի աշխատողների և մեր ընտանիքների համար չեմպիոններ ընտրելը չափազանց կարևոր է, որպեսզի Կալիֆորնիայի խնամակալները լինեն հարգված և հնարավորություն ունենան արժանապատվությամբ ապրելու իրենց կյանքը, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միության դեմոկրատիայի կապիտանները գորացնում են մեր միության անդամներին այն համայնքներում, որոնցում մենք ապրում ենք՝ նրանց տրամադրելով անհրաժեշտ միջոցներ մեր դեմոկրատիային լիակատար մասնակցելու համար, և

Քանի որ, չնայած Կալիֆորնիան զգալի առաջընթաց է կատարել իր դեմոկրատիան ուժեղացնելու հարցում, սակայն դեռևս գոյություն ունեն քաղաքականություններ, համակարգեր և կառույցներ, որոնք խանգարում են յուրաքանչյուր կալիֆորնիացու, որպեսզի նրանք գործադրեն իրենց քվեարկելու իրավունքը, այդ թվում նաև քվեարկողներին ահաբեկելն ու կասեցնելը, և

Քանի որ SEIU Տեղական 2015 Միությունը խորապես հավատում է կառուցվածքային ռասիզմի վերացմանը, որը խանգարում է, որպեսզի բոլոր կալիֆորնիացիները լիակատար մասնակցեն մեր դեմոկրատիային, և

Քանի որ SEIU Տեղական 2015 Միությունը կշարունակի առաջնահերթ դարձնել գունավոր մաշկ ունեցող կանանց, ներգաղթյալների և երիտասարդների կողմից քվեարկելու ձգտումն ուժեղացնելու հարցը, ովքեր հետ են մնում ընդհանուր ընտրագանգվածից, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը հանձն է առել աջակցել Կալիֆորնիայի մոտավորապես 2.5 միլիոն իրավական մշտական բնակիչներին, ովքեր իրավասու են դառնալ քաղաքացիներ, որպեսզի ճանապարհ գտնեն դեպի լիարժեք քաղաքացիություն և այդպիսով ձեռք բերեն մեր դեմոկրատիային լիակատար մասնակցելու իրավունք, և

Քանի որ մենք զգալի հաջողությունների ենք հասել Կալիֆորնիայում քվեարկության գրանցումն ու մասնակցությունն ավելացնելու գործում՝ ընտրելով այնպիսի առաջնորդների, ովքեր հավատում են Կալիֆորնիայի դեմոկրատիային, սակայն, դեռ շատ ավելին ունենք անելու, որպեսզի վերացնենք լիակատար մասնակցությանը խանգարող խոչընդոտները, և

ԵՐԿԱՐԱՏԵՒ ԽՆԱՄՔ ԲՈՂՈՐԻ ՀԱՄԱՐ

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը մեր պետության ամենախոշոր երկարատև խնամակալների միությունն է, որը ներկայացնում է ավելի քան 400,000 խնամակալների, ովքեր ծառայություններ են մատուցում տարեցներին և հաշմանդամություն ունեցող մարդկանց մասնավոր տներում, մասնագիտացված խնամքի և օժանդակ խնամքի հաստատություններում ամբողջ Կալիֆորնիայի տարածքով մեկ, և

Քանի որ ակնկալվում է, որ մինչև 2030 թ-ը Կալիֆորնիայում գոյություն են ունենալու 106,500 տարեցներ, ովքեր բնակվում են խնամքի տներում, որը կազմում է 2012 թ-ի համեմատ 15,000 (կամ 16%) աճ, և

Հաստատվել է

Քանի որ 2015 և 2030 թթ-ի միջև ընկած ժամանակահատվածում Կալիֆորնիայի 65-ից բարձր տարիք ունեցող բնակչությունը ակնկալվում է ավելանալ 73 %-ով՝ 5.2 միլիոնից հասնելով 9 միլիոնի, և

Քանի որ, մինչև 2030 թ-ը ավելի քան մեկ միլիոն կալիֆորնիացի տարեցներ կարիք կունենան իրենց առօրյա գործողություններում (ADL), ինչպես նաև երկարատև խնամքի ծառայություններում և աջակցություններում (LTSS), և

Քանի որ, բացի տարեց չափահասներից առավել երիտասարդ հաշմանդամություն ունեցող չափահասների քանակն ակնկալվում է առաջիկա 20 տարիների ընթացքում նահանգում աճել 20 %-ով, և

Քանի որ, երկարատև խնամքի աշխատանքը և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես դժվար է և անհամաչափորեն իրականացվում է կանանց և գունավոր մաշկ ունեցող աշխատավորների կողմից Մեդիքեյդի կողմից ֆինանսավորվող Տնային Օժանդակ Ծառայությունների (IHSS) ծրագրի միջոցով, մասնագիտացված խնամքի և օժանդակ խնամքի հաստատություններում, մասնավոր խնամակալության գործակալությունների կամ անվճար ընտանեկան խնամակալաների կողմից, և

Քանի որ, ցածր աշխատավարձերը և անբավարար ուսուցողական հնարավորությունները տնային խնամակալության և խնամքի տների բնագավառներում ստեղծել են անկայուն միտումներ, որը վանում է հավանական աշխատանք փնտրողներին, և

Քանի որ, ակնկալվում է, որ Կալիֆորնիան մինչև 2030 թ-ը կարիք կունենա 600,000-ից մինչև 3.2 միլիոն խնամակալների, որպեսզի կարողանա բավարարել տնային խնամքի ծառայությունների աճող պահանջարկը, և

Քանի որ, չնայած նահանգում գոյություն ունեն ավելի քան 600,000 IHSS և մասնավոր գործակալությունների տնային խնամակալներ, սակայն գոյություն ունենան նաև էլ ավելի չվճարվող խնամակալներ, ովքեր նույնպես տրամադրում են այդպիսի ծառայությունները, և

Քանի որ, մինչև 2026 թ-ը Կալիֆորնիան կարիք կունենա առնվազն ևս 15,800 Վավերացված Բուժօգնականների, և

Քանի որ, նահանգի մոտավորապես 1,100 Մասնագիտացված Խնամքի Հաստատություններից (SNFs) 465-ը (42 %) չեն համապատասխանում CNA-երի ժամերի նվազագույն պայմաններին, և

Քանի որ, մենք այլևս չենք կարող թույլ տալ ոչ՝ ֆինանսապես, և ոչ՝ էլ բարոյապես, որպեսզի մեր IHSS-ի, մասնագիտացված խնամքի և մասնավոր գործակալությունների աշխատավորները շարունակեն մնալ անպաշտպան, թերի վերապատրաստված, ոչ բավարար քանակի աճնակազմով և ոչ բավարար վարձատրությամբ, և

Քանի որ, 2017 թ-ին Կալիֆորնիայի ընտանեկան խնամակալները տրամադրել են չորս միլիարդ ժամ խնամք իրենց ծնողներին, ամուսիններին/կականց, գուգրնկերներին և այլ չափահասներին, որն արժե մոտավորապես \$63 միլիարդ դոլար, և

Քանի որ, բացի երկարատև խնամքի ծրագրերից օգտվելու խոչընդոտներից, քառասուն տարեկանից բարձր տարիք ունեցող կալիֆորնիացիների 56%-ը չունի որևէ տեսակի

Հաստատվել է

երկարատև խնամքի խնայողական ծրագիր, կալիֆորնիացիների երեսունյոթ տոկոսը չունի որևէ տեսակի խնայողություն, որպեսզի կարողանա վճարեն իրենց խնամքի համար՝ անկախ նրանից, որ տարեցների և չափահասաների երկարատև խնամքի բարձր պահանջարկը նույնն է, և

Քանի որ, մեր տարիք առնող բնակչության աճը ազդելու է Կալիֆորնիայի ընտանիքների մեծամասնությանը՝ պատճառելով ֆինանսական և հոգեկան լարվածություն մատչելի, որակյալ երկարատև խնամքի բացակայության պատճառով:

Այդ իսկ պատճառով որոշվում է, որ,

1. Որպեսզի կարողանանք հաղթանակել և առաջ տանել մեր Արդարության Օրակարգը, մենք հանձն ենք առնում վերացնել միլիոնավոր երկարատև խնամքի աշխատողներին խանգարող խոչընդոտները, որպեսզի նրանք կարողանան կազմավորել միություններ, այդպիսով իսկ հզորացնեն և ամրապնդեն Արդարություն Բոլորի Համար կոչը: Մենք դա կանենք հետևյալ կերպ՝
 - a. **Ընդլայնելով Կազմակերպելու Իրավունքը:** SEIU Տեղական 2015 Միությունը հանձն է առնում քարոզել այնպիսի օրենքների և քաղաքականությունների համար, որոնք կվերացնեն երկարատև խնամքի աշխատողներին խանգարող խոչընդոտները, որպեսզի նրանք ունենան ձայնի իրավունք աշխատավայրում և կարողանան կազմակերպել:
 - b. **Կառուցելով Մեր Շարժումը:** Մենք հանձն ենք առնում ստեղծել մի աշխատավորական, հոգևոր, համայնքային, հաշմանդամության և երիտասարդական կազմակերպությունների շարժում, որը կպահանջի, որպեսզի երկարատև խնամքի աշխատողներն ունենան արժանապատիվ կյանք ապրելու իրավունք և հնարավորություն՝ ազատորեն կազմակերպելու:
 - c. **Մեծացնելով Մեր Կազմակերպչական Հնարավորությունները:** SEIU Տեղական 2015 Միությունը կբացահայտի և կզարգացնի անդամ կազմակերպիչների հաջորդ սերունդը և կզինի իր անդամ առաջնորդներին անհրաժեշտ գործիքներով, որպեսզի նրանք դառնան հաջողակ կազմակերպիչներ աշխատավայրերում և համայնքներում դեռևս միություններով չներկայացվող աշխատողների համար:
2. SEIU Տեղական 2015 Միության անդամները հանձն են առնում լիովին և ակտիվորեն մասնակցել մեր դեմոկրատիային, այդպիսով հզորացնելով Կալիֆորնիայի երկարատև խնամքի աշխատողների քաղաքական ուժը: Մենք դա կանենք հետևյալ կերպ՝
 - a. **Ընտրելով Չեմպիոնների:** SEIU Տեղական 2015 Միությունը հանձն է առնում ընտրել երկարատև խնամքի չեմպիոնների, այդպիսով ապահովելով, որ

Հաստատվել է

Կալիֆորնիայի երկարատև խնամքի աշխատողներն ի վիճակի կլինեն ապրել արժանապատվությամբ և հարգանքով:

b. **Զինելով Մեր Դեմոկրատիայի Կապիտաններին և Անդամ Առաջնորդներին:** SEIU Տեղական 2015 Միությունը հանձն է առնում զինել Դեմոկրատիայի Կապիտաններին և անդամ առաջնորդներին անհրաժեշտ գործիքներով և գիտելիքներով, որպեսզի նրանք դառնան քաղաքական և համայնքային փոփոխության արդյունավետ գործակալներ:

c. **Քարոզելով Լիարժեք Մասնակցություն:** SEIU Տեղական 2015 Միությունը կշարունակի աշխատել խոչընդոտները վերացնելու ուղղությամբ և կշարունակի աջակցել կանանց, գունավոր մաշկ ունեցող մարդկանց և ներգաղթյալների լիարժեք մասնակցությունը, որն իր մեջ ընդգկում է՝ ավելացնել քվեարկությունների վերաբերյալ ուսուցանումները, քվեարկության արձանագրությունները, քվեարկողների մասնակցությունն ու քաղաքացիությունը:

d. **Բացահայտել և Հավաքագրել Թեկնածուներին:** SEIU Տեղական 2015 Միությունը կշարունակի բացահայտել և վերապատրաստել երկարատև խնամքի աշխատողներին, որպեսզի նրանք ղեկավարեն պաշտոններ և դառնան իրենց համայնքների առաջնորդներ:

3. SEIU Տեղական 2015 Միությունն աջակցում է **Երկարատև Խնամքի Ծառայություններին և Բոլոր Կալիֆորնիացիներին:** Մեր տարեցներն ու հաշմանդամություն ունեցող մարդիկ արժանի են տարիք առնել իրենց տներում արժանապատվությամբ՝ չստիպելով, որպեսզի իրենք և իրենց ընտանիքները սնանկանան կամ անտեղի լարել իրենց ֆինանսական հնարավորությունները, որպեսզի պատշաճ կերպով բավարարեն իրենց երկարատև խնամքի կարիքները:

4. SEIU Տեղական 2015 Միությունը համաձայն է, որ, որպեսզի վստահ լինենք, որ բոլոր տարեցներն ու հաշմանդամություն ունեցող մարդիկ կարող են ստանալ իրենց անհրաժեշտ երկարատև խնամքը իրենց ընտրած եղանակով, անհրաժեշտ է ստեղծել Ծերանալու Գլխավոր Պլան, որը կբարձրաձայնի երկարատև խնամքի պահանջի մասին, ինչպես նաև երկարատև խնամքի վերահաս պակասորդի մասին, նաև պետք է պարունակի հետևյալ սկզբունքները՝

a. **Որակյալ Միութենական Աշխատատեղեր և Կենտրոնացված Բանակցություններ:** Մենք հանձն ենք առել աշխատավորական և տնտեսական արդարությանը և լավ միութենական աշխատատեղերի ավելացմանը: Աշխատավոր դասակարգի ընտանիքներին աղքատությունից դուրս հանելով և բարելավելով երկարատև խնամքի ծառայությունները և աջակցելով համակարգին, մենք կարող ենք ապահովել, որ երկարատև խնամքի աշխատողները կարողանան ստանալ կենսական աշխատավարձեր, նպաստներ և կենսաթոշակ և կենտրոնացնել իրենց հավաքական բանակցային ձայնը Կալիֆորնիայում:

- b. **Հիվանդների Ընտրություն:** Արժանապատվությամբ ապրելու համար տարեցներն ու հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է ի վիճակի լինեն ստանալու իրենց նախընտրելի խնամքը:
- c. **Կայուն Ֆինանսավորման Աղբյուր:** Երկարատև խնամքի ծառայությունները ու ծրագրերը լիարժեքորեն ֆինանսավորելը առավել կարևոր է հիվանդների, խնամակալների և ընտանիքների համար, ովքեր օգտվում են այդ ծառայություններից: Մենք պետք է հաստատենք կայուն ֆինանսավորման աղբյուր երկարատև խնամքի ծառայությունների համար՝ լրացուցիչ ճնշում չգործադրելով նահանգի գլխավոր հիմնադրամի վրա:
- d. **Պատասխանատվություն և Թափանցիկություն:** Գործատերերն, ովքեր ղեկավարում և շահույթ են ստանում երկարատև խնամքի ծառայություններից և օժանդակ ծրագրերից, պետք է ապահովեն, որպեսզի ամենախոշոր հանրային գումարները օգտագործվեն երկարատև խնամքի բնագավառում որակյալ խնամք տրամադրելու և աշխատուժի պակասորդի պատճառով առաջացած խնդիրները բարձրաձայնելու համար: Գործատերերին և գործակալություններին պատասխանատու դարձնելով՝ մենք կարող ենք պաշտպանել մեր տարեցներին և ապահովել, որպեսզի յուրաքանչյուր կալիֆորնիացի ստանա ամենաորակյալ խնամքը:
- e. **Բազմահամակարգային Ինտեգրում:** Կալիֆորնիայի մեր մասնատված երկարատև խնամքի համակարգը կրիտիկական խոչընդոտ է համարվում ինչպես տարեցների, այնպես էլ խնամակալների համար: Երբ հիվանդները պայքարում են որակյալ խնամքից օգտվելու համար, մենք թերի խնամք ենք ցուցաբերում ամենախոցելի բնակչությանը: Այս ծառայությունների ղեկավարման ինտեգրումը բավարարելու միջոցով, միևնույն ժամանակ պահպանելով հիվանդների ընտրության իրավունքը, այն կաջակցի հիվանդների հասանելիությանը, ֆինանսական հավասարակշռությանը, արդյունավետությանը և խնամակալների՝ ծառայություններից հաջողությամբ օգվելու հնարավորությանը: